կարասները: Ներկում էին ամէն գոյներով, առաւելապէս լեղակի գոյնով: Գիւղացիները բերել էին զանազան տեսակ տնային գործածքներ, որպիսիք են՝ կտաւ, շալ, բամբակեայ կամ բրդեայ թելեր եւ այլն: Յաճախորդների մէջ կային զանազան ազգերից եւ զանազան լեզուներից՝ հայ, թուրք, քուրդ, ասորի եւ ուրիշները: Վճարների հատուցումները կատարւում էին ըստ մեծի մասին երկրագործական եւ անասնապահական բերքերով. փողի փոխարէն տալիս էին իւղ, պանիր, ցորեան, բուրդ, մորթիք եւ այլն: Այդ էր պատճառը, որ գործարանատէրը ստիպուած էր քաղաքում մի խանութպանի հետ ընկեր լինել, որպէսզի վաճառուեն այդ մթերքները: Ոմանք ոչինչ չէին վճարում:

Աշխատանքը եռ էր գալիս ժրաջան բանուորների ձեռքում: Փոքրիկ եւ մեծ աշակերտները, հագուստով ու մարմնով թաթախուած ներկերի մէջ, վժվժում էին այս կողմ ու այն կողմ: Կապոյտ լեղակը ամէնի ձեռքերի եւ դէմքի վրայ թողել էր իր թախծալի գոյնը: Կապոյտ էին գործարանի փայտեայ սիւները, կապոյտ էին առաստաղը, յատակը եւ կաւով ծեփած պատերը, կապոյտ էին երկայն փայտեայ ձողերը, որոնց վրայ չորացնելու համար կախ էին տուած ներկուած կտաւները: Կապտագոյն էր եւ լոյսը, որ ներս էր թափանցել գործարանի նեղ պատուհաններից:

Բայց իմ ուշադրութիւնը գրաւեց մի այլ բան, գործարանի փոխվարպետը, մի երեխայ գրկում բռնած, լռութեամբ մօտեցաւ լեղակի կարասին: Կարասը հէնց նոր էին խառնել եւ մուգ-լրջագոյն փրփուրը դեռ դիզուած էր նրա բերանի վրայ: Նա երեք անգամ պտտացրեց երեխային կարասի շուրջը, յետոյ խորհրդաւոր կերպով մատը թաթախեց փրփուրի մէջ եւ նրանով խաչաձեւ օծեց երեխայի կոկորդը: Պառաւ դայակը, որ կանգնած էր այնտեղ եւ երկիւղածութեամբ նայում էր այդ գործողութեան վրայ, ընդունեց փոխ-վարպետի ձեռքից երեխային, նրա բժշկութեանը վարձատրելով մի կապտագոյն աքաղաղով, որ բերել էր իւր հետ:

— Այդ երեխան կապոյտ հազ ունի, — ասաց վարպետ Փանոսի մայրը, որ կանգնած էր իմ մօտ, եւ խորհուրդ տուեց, որ նոյն գործողութիւնը եւ իմ կոկորդի վրայ կատարել տամ:

Շատ չանցաւ, սովորական ժպիտը երեսին, ներս մտաւ վարպետ Փանոսը: Նրա յայտնուիլը այն ազդեցութիւնը չգործեց, ինչպէս առհասարակ լինում է վարպետի ներկայութեան ժամանակ. անգործը գործի է դիմում, աղաղակները լռում են, կրկին տիրում է կարգը, ոչ, այլ կարգը պահպանուած էր եւ նրա բացակայութեան ժամանակ: Նրա մէջ չէր երեւում ոչ հպարտ գործարանատիրոջ խստութիւնը եւ ոչ արեւելեան վարպետի կոպիտ տիրասիրութիւնը, այլ մի պարզ, մտերմական կապ միացնում էր ստորադրեալներին